# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## ՈՐՈՇՈՒՄ

«08» հունվարի 2026 թվականի № 10-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 384-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 3-րդ, 4-րդ, կետերի, 5-րդ կետի <<գ>> ենթակետի, 7-րդ, 11-րդ և 16-րդ կետերի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35 –րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի դրույթներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի քաղաքացիական պաշտպանության 2026 թվականի համայնքային հետևյալ ծառայությունները և նշանակել քաղաքացիական պաշտպանության համայնքային ծառայությունների պետեր՝

1) կապի և ազդարարման ծառայություն - ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ,

2) ինժեներական ծառայություն - ծառայության պետ՝ աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի պետ,

3) բժշկական ծառայություն - ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Ն.Ա.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն,

4) տրանսպորտային ծառայություն - ծառայության պետ՝ աշխատակազմի տրանսպորտի բաժնի պետ,

5) առևտրի և սննդի ծառայություն - ծառայության պետ՝ աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժնի պետի տեղակալ,

6)էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն - ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերության <<Ղարս>> մասնաճյուղի Գյումրի համայնքի օպերատիվ կարգավարական ծառայության պետ,

7)բույսերի և կենդանիների պաշտպանության ծառայություն - ծառայության պետ՝ «Գյումրու կոմունալ ծառայություն» ՀԲՀ-ի տնօրենի տեղակալ:

8)հասարակական կարգի պահպանման ծառայություն - ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության Գյումրու <<Մուշ>> բաժնի պետ,

9)նյութատեխնիկական ապահովման ծառայություն- ծառայության պետ՝ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ,

10)կոմունալ-տեխնիկական ծառայություն - ծառայության պետ՝ աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետ,

11)բնակչության հատուկ սպասարկումների ծառայություն - ծառայության պետ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի <<Հավերժ հիշատակ>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն:

2.Առաջարկել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության պետին՝ համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունների և պլանների կազմման նպատակով փաստաթղթերի օրինակելի ձևերը տրամադրել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել մեթոդական օգնություն:

3.Համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների պետերին՝ կազմել և լրամշակել համայնքային քաղաքացիական պաշտպանության ծառայությունների կանոնադրությունները և պլանները համաձայնեցնել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարարական ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ և մինչև 2026թ. ______________ ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի հաստատմանը:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՂ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

8

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<08>> հունվարի 2025 թվականի N 9-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԻԼԻԹ ՆՈՐԻԿԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 173-րդ հոդվածով և հիմք ընդունելով Լիլիթ Նորիկի Մուրադյանի 2026 թվականի հունվարի 7-ի դիմումը, ծննդի մասին ԲԲ056402 պետական վկայականի պատճենը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Նորիկի Մուրադյանին տրամադրել երեխայի խնամքի արձակուրդ՝ մինչև երեխայի մեկ տարեկան դառնալը:

**2.** Արձակուրդի տևողությունը՝ 2026 թվականի հունվարի 9-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 7-ը:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լիլիթ Նորիկի Մուրադյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** 2026-01-08 12:06:13 GMT+4 Համաձայնված է ՀԷԿԵԼԱ-ի կողմից mID **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# ՈՐՈՇՈՒՄ

«07» հունվարի 2026 թվականի № 8 Ա

**ՔԱՂԱՔ ԳՅՈՒՄՐԻ, ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ 48Ա ՇԵՆՔ, 1 ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №12122025-08-0022) ԵՐԿՈՒ ՄԱՍԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՆՈՐ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Գարեգին Ցոլակյանի դիմումը (Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանում մուտքագրված №19666-2025 թվագրմամբ) ու չափագրման արտոնագիր ունեցող «Արսեն Նուրիջանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված շինության բաժանման սխեման և հատակագծերը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաք Գյումրի, Կամոյի փողոց 48ա շենք, 1 բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №12122025-08-0022) երկու մասերի բաժանելու նպատակով տրամադրել հասցեներ.

1) **41.8** քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կամոյի փողոց, 48ա շենք, 1 բնակարան**

2) **37.0** քառակուսի մետր մակերեսով շինությունները հասցեավորել՝

**ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կամոյի փողոց, 48ա շենք, 1/1 բնակարան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

2026 թ. ք. Գյումրի

7

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<07>> հունվարի 2026 թվականի N 7 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ ՍՈՍ ԳԱԲՐԻԵԼԻ ԻՍՊԻՐՅԱՆԻՆ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՍԻՐԱՆՈՒՇ ԿԱՐԱՊԵՏԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, << Համայնքային ծառայության մասին >> օրենքի 18-րդ հոդվածով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

**1.**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման, բնակարանային տնտեսության և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի ( այսուհետ՝ բաժին ) գլխավոր մասնագետ Սոս Գաբրիելի Իսպիրյանին ազատել բաժնի պետի ծառայողական պարտականությունների կատարումից և վերապահել բաժնի գլխավոր մասնագետ Սիրանուշ Կարապետի Մամիկոնյանին՝ 2026 թվականի հունվարի 8-ից:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոս Գաբրիելի Իսպիրյանին և Սիրանուշ Կարապետի Մամիկոնյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

# *ՈՐՈՇՈՒՄ*

*«07» հունվարի 2026 թվականի N 6 -Ա*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ 35.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ՆՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 35.62 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (31.96 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի հարևանությամբ, 35.62(երեսունհինգ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված է 35.62 (երեսունհինգ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական ) քառակուսի մետր արտաքին (31.96(երեսունմեկ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակ, որը տիրապետում և օգտագործում է քաղաքացի Արմեն Ջեյրանյանը:

Նկատի ունենալով, որ շինության պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի, թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, 4-րդ բաժնի 33-րդ կետի, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023WJAQXT ծածկագիրը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Գյումրի քաղաքի Մյասնիկյան փողոցի հարևանությամբ, 35.62(երեսունհինգ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 35.62(երեսունհինգ ամբողջ վաթսուներկու հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (31.96(երեսունմեկ ամբողջ իննսունվեց հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը համարել համայնքի սեփականություն և ճանաչել օրինական:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու առաջարկություն անել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացի Արմեն Ջեյրանյանին:
3. Սահմանված կարգով նախապատրաստել պետական գրանցման համար օրենքով նախատեսված փաստաթղթերի փաթեթը (պատասխանատու՝ քաղաքաշինության և հողօգտագործման բաժին):
4. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

2026-01-07 18:55:10 GMT+4
Համաձայն եմ ՍԻ ՊԵՏԻ կողմից

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


# *ՈՐՈՇՈՒՄ*

**«07» հունվարի 2026 թվականի N 5 -Ա**

**ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԳԵՅ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՖՈՒՐՄԱՆՈՎԻ ՓՈՂՈՑ N63/1 ՀԱՍՑԵԻ ՏԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 22.51 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ( 16.87 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքացի Սերգեյ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց N63/1 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված է 22.51(քսաներկու ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (16.87(տասնվեց ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տուն:

Քաղաքացի Սերգեյ Սիմոնյանը դիմել է նշված շինությունն օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի, հաշվի առնելով որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով ինքնակամ կառույցը Կադաստրի կոմիտեում հաշվառված լինելու փաստը հավաստող 2023N3MJAD ծածկագիրը և Սերգեյ Սիմոնյանի դիմումը (մուտքագրված համայնքապետարանում 2025 թվականին N18658 թվագրմամբ)՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Քաղաքացի Սերգեյ Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Գյումրի քաղաքի Ֆուրմանովի փողոց N63/1 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 22.51(քսաներկու ամբողջ հիսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (16.87(տասնվեց ամբողջ ութսունյոթ հարյուրերորդական) քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 72167(յոթանասուներկու հազար հարյուր վաթսունյոթ) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Օրինականացման վերաբերյալ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60 օրյա ժամկետում չվճարման դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն իրականացնել օրենքով սահմանված կարգով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*


## *ՈՐՈՇՈՒՄ*

**«07» հունվարի 2026 թվականի N 4-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N2190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կուզնեցովի փողոց N19 հասցեին կից 62.3 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 141.67 քառակուսի մետր արտաքին (116.24 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N2190-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած անճշտության պատճառով (հիմք՝ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին NԿ-27112025-08-0138 որոշում):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի սեպտեմբերի 23-ի « Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Կուզնեցովի փողոց N19 հասցեին կից 62.3 քառակուսի մետր մակերեսով հողամասը, նրա վրա ինքնակամ կառուցված 141.67 քառակուսի մետր արտաքին (116.24 քառակուսի մետր ներքին) մակերեսով բնակելի շինությունը համայնքային սեփականություն համարելու և օրինական ճանաչելու մասին» N2190-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման նախաբանում <<W9VBLB>> թիվը և տառերը փոխարինել <<M8CLQB>> թվով և տառերով :

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թ. ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

«07» հունվարի 2026 **թվականի** N 3 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի N 2297-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 06-ի N 2297-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջացել, չափագրության մեջ տեղ գտած սխալի պատճառով (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի, գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-10112025-08-0055 որոշում): Ներկայացվել է նոր ճշտգրված չափագրություն:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ մասով և 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 06-ի <<Գյումրի քաղաքի Աթոյան փողոցի հարևանությամբ քաղաքացի Վաչագան Արամայիսի Մացակյանի կողմից կառուցված 100,0 քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունների և դրանց կառուցման ու սպասարկման համար փաստացի զբաղեցրած 217,1 քառակուսի մետր մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման մասին>> N 2297-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
   1) վերնագրում<<100,0(հարյուր)>> թիվը և բառը փոխարինել <<98,4(իննսունութ ամբողջ չորս տասնորդական)>> թվով և բառերով.
   2) վերնագրում և որոշման 1-ին կետում <<217,1(երկու հարյուր տասնյոթ ամբողջ մեկ տասնորդական)>> թիվը և բառերը փոխարինել <<212,1(երկու հարյուր տասներկու ամբողջ մեկ տասնորդական)>> թվով և բառերով:

**ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

2026-01-07 11:05:37 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԴ-ի կողմից

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026թ. ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«07» հունվարի 2026 **թվականի** N 2-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑԻ N 2/20 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 2/20 հասցեի հասարակական սպասարկման օբյեկտը և 3778,21 (երեք հազար յոթ հարյուր յոթանասունութ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-0602-0007 կադաստրային ծածկագրով հողամասը սեփականության իրավունքով պատկանում է քաղաքացի «Բասենի գովք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Նշված հասարակական սպասարկման օբյեկտը և հողամասը նախկինում չափագրման ժամանակ սխալ քարտեզագրման և տեղակայման պատճառով կադաստրային քարտեզում տեղադրվել ոչ ճիշտ տեղադիրքով, որի արդյունքում առաջացել է հողամասի տեղադիրքի և սահմանների ճշտման անհրաժեշտություն:

Չափագրողի որակավորում ունեցող անձի կողմից կատարվել է նոր չափագրություն, հողամասի ճշգրտված կողմնային չափերով և տեղադիրքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն որոշման 2-րդ հավելվածի 30-րդ կետի 2-րդ ենթակետի, 31-րդ կետի 2-րդ ենթակետի՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

1. Հաստատել «Ս ֆոռմատ սթայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կազմված, «Բասենի գովք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Նժդեհի փողոցի N 2/20 հասցեի հասարակական սպասարկման օբյեկտի և 3778,21 (երեք հազար յոթ հարյուր յոթանասունութ ամբողջ քսանմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով 08-001-0602-0007 կադաստրային ծածկագրով հողամասի տեղադիրքը և հատակագիծը:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ վերը նշված հողամասի տեղադիրքի ճշտման և սեփականության իրավունքի վերագրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

**2026 թվական, քաղաք Գյումրի**

05

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

<<05>> հունվարի 2026թվականի N 1 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՈՒՐԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 159-րդ հոդվածի 1-ին, 161-րդ հոդվածի 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերով, ցանկի 18-րդ կետով և հիմք ընդունելով Հովհաննես Սուրենի Կարապետյանի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.**

**1.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի օգնական Հովհաննես Սուրենի Կարապետյանին տրամադրել 2026 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը և ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 2026 թվականի հունվարի 7-ից:

**2.** Ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 20 աշխատանքային օր և ամենամյա լրացուցիչ արձակուրդը՝ 4 աշխատանքային օր՝ 2026 թվականի հունվարի 7-ից մինչև փետրվարի 10-ը ներառյալ:

**3.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Սուրենի Կարապետյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝** **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**

ք.Գյումրի